

# **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

## **«ԻՐԱՎՈՒՆՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

### **ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ**

Ամեն մի ամբողջական և հետևողական իրավական տեսության կամ փիլիսոփայության հիմքում ընկած է կոնկրետ իրավահասկացություն: «Իրավունք» հասկացության նման նշանակությունը շատ պատկերավոր արտահայտել է Վ. Ներսեսյանցը. «Ինչպես սերմի մեջ է տրված բույսի որոշակի ապագան, այնպես էլ իրավունքի հասկացության մեջ գիտական-վերացարկված (խտացված և կենտրոնացված) տեսքով բովանդակվում է որոշակի իրավաբանական տեսություն, իրավագիտության որոշակի հայեցակարգի (և տիպի) տեսական-իրավական իմաստ և բովանդակություն: Այսպիսով, եթե իրավունքի հասկացությունը խտացված իրավաբանական տեսություն է, ապա իրավաբանական տեսությունը՝ իրավունքի ծավալում հասկացությունն է»<sup>1</sup>:

Իրավահասկացության զանազան տարբերակների գոյությունը, իրավունքի վերաբերյալ կարծիքների բազմազանությունը կարող են դառնալ տարբեր գաղափարաքաղաքական մոտեցումների ու դիրքորոշումների առաջացման պատճառ, հետևաբար՝ դառնալ քաղաքական գործողությունների նախադրյալ, ծնել բախումներ: Ժամանակակից աշխարհի շատ բախումների (միջազգային, ներպետական՝ սոցիալական, ազգային և այլն) պատճառը հիմնականում իրավական հիմնախնդիրներ են: Այսպես, Ա. Մատյուխինը՝ 1999 թ. Հարավսլավիայի ռեֆակտման կապակցությամբ ԱՄՆ և ՌԴ տարածայնությունների հիմնական պատճառ է համարում աշխարհայացքային տարբերությունները: Ամերիկացիները վկայակոչում էին մարդու իրավունքների խախտումները Կոսովոյում, իսկ ռուսները՝ ագրեսիայի անթույլատրելիությունը: Ռուսաստանը ԱՄՆ-ին մեղադրում էր իրավունքի ուժն ուժի իրավունքով փոխարինելու, իսկ ԱՄՆ-ը Ռուսաստանին՝ այն դիկտատուրան պաշտպանելու համար, որը, բացի ուժից, այլ լեզու չի ճանաչում<sup>2</sup>:

Բերված օրինակը ցույց է տալիս, որ «իրավունք» հասկացությունն ունի շատ մեծ և կարևոր տեսամեթոդական ու գործնական-կիրառական նշանակություն: Փորձենք վեր հանել այդ նշանակությունը դրա գործառույթների միջոցով: Տեսական աստիճանի մշակված ամեն մի հայեցակարգ ունի իր առջև ծառայած խնդիրներ, որոնք լուծելու համար տեսությունը գործում է որոշակի ուղղություններով, այսինքն՝ կատարում է գործառույթներ: «Գործառույթ» հասկացությունը վերագրելով տեսական հա-

<sup>1</sup> Վ. Ս. Ներսեսյանց, Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001, էջ 29:

<sup>2</sup> Տե՛ս Матюхин А. Государство в сфере права: институциональный подход. Алматы, 2000, էջ 487-488:

մակարգերին՝ մենք փորձում ենք նկարագրել, բնութագրել այդ տեսության հենց պահանջվող, պատշաճ գործողությունը<sup>3</sup>: Որպես գիտության սոցիալական կոչումն ու առաքելությունը բնութագրող հասկացություն՝ «գործառույթների» կատարումը կարելի է վերապահել ոչ միայն տեսություններին, այլ նաև հասկացություններին և հատկապես հիմնարար իրավական հասկացություններին, ինչպիսիք են, օրինակ, «իրավունք», «պետություն» և այլն: «Իրավունք» հասկացության գործառույթները դրա կոնկրետ ծառայական ընդունակություններն են:

Տեսական առումով «իրավունք» հասկացության բնորոշումն անհրաժեշտ է հայեցակարգերի միջև ընտրություն կատարելու համար: Գործող դրական իրավունքի բովանդակության կազմավորման, այն փոխելու և զարգացնելու հարցի էությունն ամենից առաջ ընտրության, իրավունքի հասկացության այս կամ այն տարբերակը նախընտրելու խնդիր է<sup>4</sup>: Այս տեսանկյունից հարցի ցանկացած լուծում սուբյեկտիվ-սոցիալական ստեղծագործության դրսևորում է: Դա պայմանավորված է մարդկանց կամքի հարաբերական անկախությամբ: Այդ ազատությունը դրսևորելու մեծ տեղ կա իրավական պատկերացումների, նախապատվությունների, իրավաստեղծագործության ոլորտում<sup>5</sup>:

Իրավական հայեցակարգերը կարող են կողմնորոշված լինել կամ դեպի իրավունքի բովանդակությունը, կամ իրավունքի ձևակազմական հատկությունները: Հնարավոր է նաև երրորդ տարբերակը՝ երկու մոտեցումները հաշտեցնող, խառը հայեցակարգ: Այսինքն՝ «իրավունք» հասկացության բովանդակային վերլուծություն իրականացնող հետազոտողը, իր ուշադրությունը կենտրոնացնելով իրավունքի ծագման, իմաստի, վերջնական նպատակների վրա, ի վերջո հանգում է ինչ-որ գլխավոր սկզբունքի՝ որպես իրավունքի գլխավոր էության: Օրինակ՝ բնական իրավունքների կամ արդարության ու իրավահավասարության: Նման եզրահանգումը նշանակում է, որ իրավունքը մեկի տեսանկյունից պետք է ապահովի բնական իրավունքները, իսկ մյուսի տեսանկյունից՝ իրավահավասարությունը: Այսպես, իրավունքի նորմատիվ հասկացության դեպքում իրավունքի համակարգի ներքին տրամաբանական կապը մոլորում է առաջին պլան: Դա առաջին հերթին պայմանավորված է «իրավունք» հասկացությանը տրված բնորոշմամբ: Հ. Քելզենը, իր կարծիքով, իրավունքը մաքրեց մետաֆիզիկայից և այն բնորոշեց որպես աստիճանականորեն կառուցված նորմերի հերթականություն: Ըստ Քելզենի՝ յուրաքանչյուր նորմ իր պարտադիր ուժը վերցնում է ձևով նման ավելի բարձր նորմից: Հետևաբար, իրավագիտության խնդիրն է վերլուծել միայն նորմատիվ նյութը, բայց ոչ իմաստը և նպատակահարմարությունը, որոնք արդեն իրավունքի տեսության առարկայական ոլորտի հիմնահարցեր չեն:

«Իրավունք» հասկացության բնորոշումից կախված՝ լուծվում է իրավական հիմնախնդիրների մեծ մասը: Օրինակ՝ «իրավունք» և «օրենք» հասկացությունների հարաբերակցության հարցի լուծումը իրավահասկացության որևէ վարկածում կարող է դիտարկվել դրանց տարբերակման հա-

<sup>3</sup> Տե՛ս **Протасов В. Н.** Теория государства и права. Проблемы общей теории права и государства. М., 2001, էջ 33:

<sup>4</sup> Տե՛ս «Проблемы теории государства и права». М., 2001, էջ 348:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 349:

մատեքստում, որն առաջացնում և միաժամանակ պատասխան է տալիս նոր իրավական հիմնախնդիրների (ինչ են օրենքը, իրավական և ոչ իրավական օրենքը և այլն): Բայց իրավահասկացության տարբերակը կարող է այդ երկու հասկացությունները (նկատի ունենք օրենքը լայն իմաստով) դիտարկել որպես հոմանիշներ կամ սուկ իրավունքի արտահայտման ձև՝ իրավական սովորույթի և դատական նախադեպի կողքին: Այսպիսով, «իրավունք» հասկացության բնորոշումը հանգեցնում է իրավունքի ընդհանուր տեսության որոշակի սկզբունքների, հայեցակարգերի, կառուցակարգերի, ինչպես նաև՝ իրավական որոշակի մտածողության: Հետևաբար, «իրավունք» հասկացությունը առաջին հերթին կատարում է տեսամեթոդաբանական գործառույթ:

«Իրավունք» հասկացությունը կատարում է նաև **կիրառական իրավական գործառույթ**: Մարդկանց գիտակցության և կամային վարքագծի առանձնահատկությունների աղբյուր կարող են լինել զանազան գործոններ: Դրանցում կարևոր տեղ ունեն այս կամ այն իրավական հայացքները, հայեցակարգերը, որոնց մարդիկ ցանկանում են հետևել կամ հարկադրված են հետևելու: Այլ կերպ ասած՝ ամեն մի իրավական հայեցակարգ ունի կիրառական-գործնական նշանակություն, և այդ իմաստով այն տրամաբանորեն արդարացնում է իր գոյությունը<sup>6</sup>: Այդ նշանակությունը կարող է տեղ գտնել ինչպես իրավաբանական պրակտիկայում, այնպես էլ կրթական, իրավաստեղծ և հոգեմտակերպային ոլորտներում: Այդ կապակցությամբ Ս. Ն. Մարչենկոն գրում է. «Ակնհայտության պատճառով անհրաժեշտություն չկա ապացուցելու, որ իրավահասկացության հիմնախնդիրների բավարար լուծումն ունի ոչ միայն տեսական և նույնիսկ ոչ այնքան տեսական, որքան գործնական նշանակություն: Հստակ պատկերացումն այն մասին, թե ինչ է իրավունքը, որոնք են դրա ձևերը կամ աղբյուրները, ինչը պետք է դիտել որպես «իրավական», ունի անանցողիկ և անզնահատելի նշանակություն ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավապահպան և իրավաիրացնող գործունեության համար»<sup>7</sup>:

Գործնական իրավաբանական ոլորտում իրավունքի կոնկրետ կիրառման գործընթացում իրավաբանները երբեմն դիմում են իրավունքի ընդհանուր տեսության, նաև «իրավունք» հասկացության բնորոշման օգնությամբ, որպեսզի կարողանան հայտնաբերել, մեկնաբանել և գործողության մեջ դնել հնարավոր որոշումները: Պրակտիկ իրավաբաններն իրավունքի նորմերի սովորական կիրառողի դեր չեն կատարում: Իրավական իրադրությունները որակելիս անզնահատելի դեր է կատարում «իրավունք» հասկացության բնորոշումը, հատկապես եթե այն լայն կամ իրավաբանական տիպի բնորոշում է: Այս հիմնախնդիրն իրավագետներն անվանում են իրավունքի ոգուն հետևել: Այսինքն՝ իրավաբանը կատարում է ոչ միայն ձևական-դոգմատիկ տրամաբանական աշխատանք, այլև պարտավոր է, բացի «օրենքի տառից», բռնել նաև «օրենքի ոգին»: Իսկ այդ ոգին առաջին հերթին «իրավունք» հասկացության բնորոշման մեջ է:

Իրավական շատ համակարգերում նկատվում է հանրային իշխանու-

<sup>6</sup> Տե՛ս «Проблемы теории государства и права», էջ 349:

<sup>7</sup> **Марченко М. Н.** Источники права. М., 2005, с. 24.

թյան անհարկի միջամտությունը իրավական գործունեության տարբեր ուղորտներին, ընդ որում՝ երբեմն նաև ճիշտ չհասկացված «հանրային շահերի» դիրքերից: Այս դեպքերում հանրային իշխանությանը կարգի իրավիրելու միջոցներից մեկն էլ համապատասխան կառուցակարգերի միջոցով (օրինակ՝ սահմանադրական արդարադատության) տվյալ երկրին բնորոշ իրավահասկացողության տարբերակի կիրառումն է:

Արդի աշխարհի իրավական համակարգերին բնորոշ մյուս գիծը նորմատիվ իրավական տեքստերի անընդհատ աճող քանակն է, առավել մանրամասնեցված ու տեխնիկական կանոնների առաջ գալը: Իրավական տեքստերի նման աճն արդյունավետ չէ, որովհետև հանգեցնում է դրանց չկատարման: Մյուս կողմից՝ որքան էլ զարգացած լինի մանրամասն կարգավորումը, այն չի կարող ներառել բոլոր իրական դեպքերը՝ կազուսները: Իսկ իրավունքի բնորոշումը և դրան համապատասխանող էությունն ու սկզբունքները պարունակում են շատ ավելի նոր և չնախատեսված իրադրություններ: Յետևաբար, այն հասարակական հարաբերությունների կարգավորման հիմք լինելու գործնական մեծ հնարավորություններ ունի: Իրավահասկացության տարբերակը, իրեն բնորոշ իրավական էությամբ և սկզբունքներով, «անթիվ-անհամար» իրավական տեքստերի «դատարկ ձևակերպումների» կամ հակասությունների, բացերի, անհասկանալի դրույթների օպերատիվ հաղթահարման հիմք է: Իրավունքի բացերի լրացման լավագույն ձևը իրավաստեղծագործության միջոցով դրանք վերացնելն է: Սակայն իրավունքի կիրառմանը ներկայացվող պահանջներից մեկն էլ օպերատիվությունն է: Իրավաստեղծագործության ճանապարհով օրենքի բացի վերացումը շատ դանդաղ գործընթաց է, որը իրավակիրառումը զրկում է արդյունավետությունից: Իրավունքի կիրառման օպերատիվության ու արդյունավետության ապահովմանն է ուղղված հենց իրավաբանական համանմանության միջոցով իրավունքի բացը հաղթահարելու՝ օրենքներով նախատեսված հնարավորությունը: Իրավունքի համանմանությունը քննարկվող դեպքի նկատմամբ ամբողջ իրավունքի կամ իրավունքի ճյուղի կամ իրավական ինստիտուտի ընդհանուր դրույթների ու սկզբունքների կիրառումն է<sup>8</sup>: Իրավունքի համանմանությունը նշանակում է օրենսդրությամբ չկարգավորված հարաբերության նկատմամբ իրավունքի ընդհանուր դրույթների և իմաստի կիրառում: «Ընդհանուր սկզբունքներ և իրավունքի իմաստ» ասելով հասկանում են իրավունքի և իրավական կարգավորման համաիրավական և ճյուղային սկզբունքները, ուրեմն նաև՝ իրավահասկացությունը: Իսկ դա նշանակում է, որ իրավաբանական տեսությունը (հայեցակարգը) ճանաչվում է գործող իրավունքի աղբյուր իրա-

<sup>8</sup> Համանմանության կիրառման ուղորտների հարցը իրավունքի տեսության մեջ վիճելի է: Կան հեղինակներ, ովքեր գտնում են, որ համանմանության կիրառումը թույլատրվում է ամենուր, որտեղ չկա դրա հատուկ արգելք (տե՛ս «Общая теория права и государства. Под ред. В. В. Лазарева». М., 1994, էջ 176): Այլ հեղինակների կարծիքով՝ իրավունքի բացերը համանմանության միջոցով կարող են լրացվել միայն այն դեպքում, եթե դա ուղղակիորեն թույլատրված է օրենքով (տե՛ս **Комаров С. А.** Общая теория государства и права. М., 1997, էջ 317): Կարծում ենք՝ ճիշտ է վերջին տեսակետը: Իրավունքի բացերի լրացում համանմանության միջոցով՝ որպես հանրային իրավական իրավագործություն, կարող է իրականացվել միայն այն ուղորտներում, որտեղ դա ուղղակիորեն թույլատրված է օրենքով:

վունքի համանմանության կիրառման ոլորտում: Համաձայն ազատական-իրավաբանական իրավահասկացողության՝ ձևական (իրավական) հավասարությունը իրավունքի հիմնարար և համընդհանուր սկզբունքն է, որի կոնկրետացումներ են համարվում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մնացած բոլոր նորմատիվ իրավական ձևերը<sup>9</sup>:

Իրավաստեղծ գործունեության ընթացքը ևս կարիք ունի մեթոդաբանական, տեսական ավելի բարձր, ընդգրկուն զինվածության, իրավաբանական ավելի բազմերանգ արտացոլման<sup>10</sup>: Իրավաբանական ակտերի որակը և արդյունավետությունը մեծապես կախված են օրենսդիրների հատկապես իրավաբանական արհեստավարժությունից: Իրավակիրառ մարմինները, դատարանները կշահեն իրավունքի ընդհանուր տեսության իմացությունից: Իրավունքը գործողության մեջ դնելը անբաժան է այն լավ կամ ճիշտ հասկանալուց, իրավաբանական երևույթները ամբողջական համատեքստում ըմբռնելուց:

Այսպիսով, իրավահասկացությունը, իրավակազմավորումը (իրավաստեղծագործությունը), իրավակենսագործումը և իրավակիրառումը սոցիալական նպատակներին, իդեալներին հասնելու միջոց են<sup>11</sup>: Դրանք լինելով փոխկապակցված և փոխապայմանավորված, բայց և այնպես այդ փոխհամագործակցության մեջ որպես առաջնային, կապող, համակարգակազմիչ հանդես է գալիս իրավահասկացությունը:

**Իրավունքը և իրավահասկացողությունը կարևոր դեր են խաղում քաղաքականության ոլորտում:** Քաղաքականությունը, քաղաքական ինստիտուտները, որպես կանոն, ենթարկված են իրավական կարգավորման, այսինքն՝ դրանք ծագում են, գոյություն ունեն և գործում են իրավունքի, իրավական գաղափարների հիման վրա և դրանց շրջանակներում: Բանական, կառուցողական, գիտականորեն հիմնավորված քաղաքականությունը չի կարող լինել հակաիրավական: Հակառակ դեպքում այն կարող է վերածվել ոչ լեգիտիմ, ժողովրդի և հասարակության շահերին հակասող գործընթացի<sup>12</sup>:

Իրավունքի և քաղաքականության հարաբերակցության խնդիրը բարդ հիմնահարց է, որ մեկնաբանելիս պատմականորեն հանդիպում են նաև տարբեր բնույթի «շեղումներ», պատեհապաշտություն: Օրինակ՝ խորհրդային իրավագիտությունը և պրակտիկան իրավունքը դիտում էին պրագմատիկ, կիրառական տեսանկյունից, որպես իշխանության գործիք, զենք, լծակ, այլ ոչ թե ինքնուրույն համամարդասիրական, սոցիալական և մշակութային արժեք: Խորհրդային իրավագիտությունը խարսխված էր իրավունքի

<sup>9</sup> Տե՛ս **Нерсесянц В. С.** Общая теория права и государства. М., 1999, էջ 490:

<sup>10</sup> Իհարկե, իրավունքի դրականացման, այն իրավական օրենքի վերածելու գործընթացը, իրավունքի օբյեկտիվ որակների ու պահանջների հաշվառման անհրաժեշտությունից բացի, կախված է բազմաթիվ այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններից՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր, մշակութային և այլն: Օրենքի անհամապատասխանությունն իրավունքին կարող է լինել տիրող կարգերի իրավաբացասող բնույթի, օրենսդրի հակաիրավական դիրքորոշման կամ տարբեր տեսակի սխալների, բացթողումների ու թերությունների, ցածր իրավական և օրինաստեղծ մշակույթի և այլնի հետևանք (տե՛ս «Проблемы общей теории права и государства». Под общей ред. В. С. Нерсесянца. М., 1999, էջ 71): Սակայն ակնհայտ է, որ այդ գործընթացում իրավահասկացությունը երկրորդական դեր չի կատարում:

<sup>11</sup> Տե՛ս «Проблемы теории государства и права». М., 2001, էջ 350:

<sup>12</sup> Տե՛ս «Российская правовая политика». М., 2003, էջ 39:

նկատմամբ քաղաքականության գերակայության դրույթի վրա: Դրան լայնորեն նպաստում էր նաև խորհրդային դրական նորմատիվիստական իրավահասկացությունը: Մինչդեռ անառարկելի է այն, որ իրավունքը և քաղաքականությունը պետք է ներդաշնակորեն փոխգործակցեն, այլ ոչ թե հակասեն միմյանց: «Քաղաքականությունը պետք է լինի իրավական, իսկ իրավունքը նպաստի պետական բանական քաղաքականության իրականացմանը»<sup>13</sup>:

Արդի պայմաններում, երբ հռչակված են իրավական պետության, իրավունքի (օրենքի) գերակայության, մարդու իրավունքների առաջնայնության գաղափարները, պետք է նշել, որ դրանք բոլորը կոչված են մերժելու քաղաքականության գերակայությունը իրավունքի նկատմամբ: Բայց իրականում ոչ միշտ է և ոչ ամենուր է, որ այդ պահանջը կենսագործվում է: Իրավունքը և իրավահասկացության վարկածը պետք է կատարեն քաղաքական կյանքի արդյունավետ կայացման գործառույթ, արտահայտեն և պաշտպանեն արդարությունը, արմատախիլ անեն կամայականությունը<sup>14</sup>: Ահա թե որոնք են իրավունքի գործառույթները քաղաքականության ոլորտում: Ասվածը կարելի է ամփոփել հետևյալ ձևակերպմամբ. «Իրավունքը զսպաշապիկ է իշխանության համար»:

Իրավունքի և քաղաքականության հարաբերակցության հարցում ակնհայտ են իրավունքի գերակայության առավելությունները, որը ենթադրում է քաղաքականության ենթաիրավականություն: Այսինքն՝ սովորական, ժողովրդավարական քաղաքական-իրավական ռեժիմը կառուցվում է իրավական հունով, իրականացվում է իրավական միջոցներով, պետք է համապատասխանի իրավական իդեալներին (այդ թվում՝ «իրավունք» հասկացությանը): Մի խոսքով՝ քաղաքականությունը պետք է լինի իրավական:

Քաղաքականությունը իրավական դարձնելու միջոցներից մեկն էլ իրավահասկացության տիպն է կամ տարբերակը: Եթե նույնիսկ ընդունում ենք քաղաքականության նկատմամբ իրավունքի գերակայության դրույթը, և իրական քաղաքականությունը տարվում է իրավական հունով, դա չի նշանակում, որ իրավունք և քաղաքականություն հարաբերակցության խնդիրը լուծվում է ընդմիջտ: Այն իրավունքի և իրավականության ոգով լուծելու համար շատ մեծ նշանակություն ունի իրավահասկացությունը: Մասնավորապես՝ եթե պաշտոնական պետական իրավական հայեցակարգը և իրավաբանական պրակտիկան ելնում են իրավունքի հասկացության դրապաշտական, նորմատիվիստական դիրքերից, ապա իրավունքի և քաղաքականության հարաբերակցությունը վերածվում է զուտ և միայն օրինականության հիմնախնդրի: Այսինքն՝ իրավունքի և օրենքի համընկնման դեպքում քաղաքականության խնդիրն իր իսկ սահմանած օրենքների պահպանումն է, դրանց հունով ընթանալը: Այսպիսի լուծումը ազատություն է տալիս քաղաքականությանը: Քաղաքականության սահմանափակման երաշխիք է դառնում ինքնազսպումը: Սակայն ինքնազսպված քաղաքականությունը սովորաբար բացառիկ երևույթ է: Քաղաքականությունը և իշխանությունը միշտ հակված են կամայականության, քանի որ միշտ և ա-

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 44:

<sup>14</sup> Տե՛ս Գյսեյնով Ա. Ա. Моральная демагогия как форма апологии насилия // "Вопросы философии", 1995, № 5:

մենուր ձգտում են ազատվել ամեն տեսակի վերահսկողությունից, իրավական կարգավորումից: Չունենալով իրավական որևէ զսպաշապիկ՝ քաղաքականությունը կարող է դիմել օրենքների վերածնունդ, դրանք հարմարեցնել իր շահերին և նպատակներին: Սա շատ վտանգավոր է անցումային պայմաններում, երբ կայուն իրավական մերժողականությանը գումարվում են քաղաքականության երկակիությունը, իշխանության սերտաճումը օլիգարխիկ և քրեածին տարրերի հետ:

Իրավունքի հասկացությունը՝ կառուցված իրավունքի՝ որպես օբյեկտիվ գաղափարի, և օրենքի՝ որպես նրա դրսևորման ձևերից մեկի տարբերակման հայեցակարգի վրա, օրենքից բացի, ի դեմս իրավունքի, ներգրավում է նոր, լրացուցիչ զսպաշապիկ: Այդպիսի զսպաշապիկի դեր է կատարում իրավունքը, որը պահանջում է, որ օրենքը լինի իրավական, իրավունքին համապատասխանող: Այդպիսի պահանջն արգելում է պետությանը դրսևորելու «օրինական կամայականություն», օրինաստեղծագործության միջոցով իրավունքի նկատմամբ հաստատելու քաղաքականության առաջնայնություն: Իրավահասկացության իրավաբանական տարբերակը քաղաքականությանը, օրինականության պահանջից բացի, ներկայացնում է նաև իրավականության պահանջ, որն արտահայտում է «իրավական օրինականություն» հասկացության միջոցով<sup>15</sup>: Իսկ դա նշանակում է, որ քաղաքական հիմնախնդիրները պետք է լուծվեն իրավունքի շրջանակներում, իրավունքի միջոցով, իրավունքի օգնությամբ, այնպիսի իրավունքի, որը չի հակադրված օրենքին, իսկ վերջինս համապատասխանում է բարոյականությանը, արդարությանը, իրավահավասարությանը, մարդու բնական իրավունքներին, սահմանադրությանը:

**«Իրավունք» հասկացությունը կատարում է արժեքաբանական գործառույթ**<sup>16</sup>: Իրավունքի արժեքը կարելի է քննարկել երկու հարթություններում: Լայն կամ սոցիալական հարթությունում իրավունքը, ինչպես և այլ սոցիալական նորմերը հիմնական ձևեր ու միջոցներ են, որոնց օգնությամբ իրականացվում է մարդկանց վարքագծի, հասարակական հարաբերությունների կարգավորումը: Դրանց արժանիքն այն է, որ սոցիալապես անհրաժեշտ են, գիտակցական և նպատակաուղղված ներգործության միջոցներ են, հնարավորություն են տալիս հասարակական կյանքը զերծ պահելու քաոսից: Երկրորդ հարթությունում իրավական արժեքաբանությունը ենթադրում է իրավունքի ու օրենքի տարբերակումը և հարաբերակցությունը: Այս տեսանկյունից իրավական արժեքաբանությունն իմաստ ունի միայն իրավաբանական իրավահասկացության այս կամ այն վարկածի հիման վրա կամ դրա շրջանակներում: Այս իմաստով դրականությունը, նորմատիվականությունը չունեն արժեքաբանություն:

<sup>15</sup> «Իրավական օրինականությունը» ենթադրում է օրենսդրության իրավական բնույթը, այսինքն՝ ՀՀ Սահմանադրությունը, օրենքները պետք է ճիշտ արտահայտեն իդեալական իրավունքը, իրավական սկզբունքները, համամարդկային արժեքները, ազատ, ժողովրդավարական պետության իրավական իդեալները:

<sup>16</sup> Արժեքները շրջակա աշխարհին հատուկ սոցիալական բնորոշումներն են և վեր են հանում դրանց դրական կամ բացասական նշանակությունը մարդու և հասարակության համար: Արժեքաբանությունն իր հերթին ուսմունք է արժեքների մասին: Իրավական արժեքաբանությունը ուսումնասիրում է իրավունքի՝ որպես արժեքի հասկացման և մեկնաբանման հիմնախնդիրները:

Իրավաբանական իրավահասկացության դեպքում խոսքը իրավունքի դիրքերից օրենքի իրավական իմաստի և նշանակության գնահատման կամ առկա, էմպիրիկ, իրական իրավունքի (դրական իրավունքի) արժևորման, ինչպես նաև պետության իրավական որակների գնահատման մասին է, դրանք իրավունքի պահանջներին, նպատակներին համապատասխանեցնելու մասին: Եթե այս տեսանկյունից մոտենանք իրավունքին, ապա այն, լինի բնական թե ազատական իրավունք, միայն օրենքի՝ դրական իրավունքի և պետության արժեքն ու նպատակն է: Օրենքը և պետությունն ունեն որոշակի արժեք միայն որպես իրավական երևույթներ: Ըստ այդմ՝ կարելի է պնդել հետևյալ իմպերատիվ բանաձևը՝ **օրենքը (կամ դրական իրավունքը) և պետությունը պետք է լինեն իրավական: Իրավական օրենքը և իրավական պետությունը իրավունքի նպատակն են:**

Իրավական արժեքաբանության՝ որպես մոտեցման առաջացումը կապված է բնական-իրավական հայացքների ծագման հետ, բնական իրավունքը և դրական իրավունքը սահմանազատելու հետ: Առաջինը բնական իրավունքի տեսությունն էր, որ առաջադրեց այդ տարբերակումը: Ըստ բնական-իրավական արժեքաբանության՝ բնական իրավունքը՝ որպես իսկական իրավունքի օբյեկտիվ հատկությունների և արժեքների կենսագործում, դրական իրավունքը գնահատելու պատշաճ օրինակ է, այն արժևորելու նպատակ և չափանիշ: Այսպիսով, բնական իրավունքի հասկացության մեջ իրավունքի այս կամ այն օբյեկտիվ հատկությունների հետ միասին (իրավական հավասարություն, ազատություն և այլն) ներառվում են նաև տարբեր տեսակի բարոյակրոնական բնութագրեր, և բնական իրավունքը ներկայանում է որպես որոշակի արժեքաբովանդակային բարոյաիրավական համալիր, որի դիրքերից արժեքավորում կամ գնահատվում է դրական իրավունքը կամ դրական օրենսդրի դիրքորոշումը<sup>17</sup>:

Արժեքաբանության մեկ այլ վարկածի հիմքում ընկած են իրավահասկացության ազատական-իրավաբանական հայեցակարգը, ինչպես նաև՝ իրավունքի և օրենքի տարբերակման և նրանց միջև որոշակի հարաբերակցության մեթոդաբանական մոտեցումը: Այսպիսով, սկզբունքային դիրքորոշման դեպքում հաշվի են առնվում ինչպես բնական-իրավական, այնպես էլ իրավաբանական-դրապաշտական տեսությունների ռացիոնալ հատիկները, և միաժամանակ հնարավորություն է ընձեռնվում հաղթահարելու դրանցից ամեն մեկին բնորոշ թերությունները և սահմանափակությունները: Ազատական-իրավաբանական արժեքաբանության տեսակետից իրականում կա միայն այն, ինչն առկա է ձևական հավասարության սկզբունքում կամ դուրս է բերվում վերջինից: Իրավունքը՝ որպես ձևական հավասարություն, համարվում է օրենքի և պետության համար նպատակ, իսկ դա

<sup>17</sup> Բարոյական կամ նյութական բովանդակության հետ զուտ իրավական չափանիշների զուգակցումը հանգեցնում է այն բանին, որ բնական-իրավական տարբեր հայեցակարգերն արդարության մասին, հակառակ իրենց հավակնություններին՝ լինել համընդհանուր և բացարձակ արժեք, իրականում վերածվում են հարաբերական արժեքի և արտահայտում են առօրեական պատկերացումները բարոյականության մասին ընդհանրապես և իրավունքի բարոյական արժեքների մասին մասնավորապես: Այդ ամենի հետևանքով իրավական արժեքաբանության երկրորդ հարթության վրա օրենքի իրավական արժեքի հիմնախնդիրները փոխվում են դրա բարոյական, կրոնական, երբեմն նաև գաղափարական գնահատականներով:



նշանակում է, որ օրենքը և պետությունը պետք է կողմնորոշված լինեն իրավունքի պահանջների կենսագործմանը, և հենց միայն դա է նրանց նպատակը, իմաստը, սոցիալական ողջ նշանակությունը:

**Իրավունքի հասկացությունն ունի ուսուցողական, կրթիչ, դաստիարակիչ ներուժ:** Առաջին հերթին, «իրավունք» հասկացությունը պատրաստ է ծառայելու ոչ միայն տեսությանը, այլև իրավագիտակցությանը, լինի դա գիտական թե առօրեական, հասարակական թե անհատական: Իրավական ոլորտում կենտրոնացված են շատ արժեքներ: Իրավունքի տեսության մեթոդաբանական կամ փիլիսոփայական մասը դրանցից առանձնացնում է առաջնայինները (նախ և առաջ իրավունք հասկացությունը), կառուցում է հասկացությունների և արժեքների ստորակազմությունը, հիմնավորում է դրանց տրամաբանականությունը:

Կրթիչ-դաստիարակիչ գործառույթի միջոցով իրավունքի հասկացությունը ներդրվում է սոցիալական կյանքի սուբյեկտների արժեքների համակարգում: Դրանով իսկ այն իրավունքի սուբյեկտներին համոզում է իրենց սոցիալական կեցությունը հարմարեցնել իրավունքի, հասարակական բարիքի և արդարության իրավական իդեալներին: Իրավահասկացությունը և դրա վարկածների մասնագիտական իմացությունը նպաստում են բնակչության իրավական մշակույթի մակարդակի բարձրացմանը, օգնում են դաստիարակել հարգանք իրավունքի և այլ իրավական երևույթների նկատմամբ: Իհարկե, շատ կարևոր է, որ բուն իրավահասկացությունը լինի առաջադիմական: Միայն այդ դեպքում այն կրթության և դաստիարակության միջոցով կխթանի հասարակական և իրավական առաջադիմությունը: Այս գործառույթի կոչումն է նաև համոզել և հիմնավորել, որ ոչ իրավականը հակասում է մարդու առաքելությանը և հակահասարակական է: Միաժամանակ, այն նախազգուշացնում է իրավական իդեալներից շեղվելու կործանարար հետևանքների մասին:

Այս տեսանկյունից իրավունք հասկացության նման դերը կարելի է անվանել նաև գաղափարախոսական: Իրավունքի հասկացությունը համարվում է իրավական գիտակցության այնպիսի բաղադրատարրի առաջնային մաս, ինչպիսին է իրավական գաղափարախոսությունը: Այն, փաստորեն, անհատի և հասարակության իրավական աշխարհայացքի հիմքն է: Օրինակ՝ այդպիսի ստեղծարար և կառուցողական նշանակություն ունի բնական իրավունքի տեսությունը: Իրավունք հասկացության բնորոշումը և դրա հիմքի վրա կառուցված իրավունքի ընդհանուր տեսությունն արդի իրավաբանի գիտելիքների պաշարի առաջին և անհրաժեշտ մասն են: Իրավաբանական կրթություն ստացող ուսանողի լավ ուսուցումը պետք է առավելապես հիմնվի իրավունքի ընդհանուր տեսության ուսումնասիրության, իմացության վրա և, ընդհակառակը, ավելի քիչ ենթադրի գիտելիքների հասարակ կուտակում: Անհատների արժեքային-աշխարհայացքային կողմնորոշումը շատ կարևոր է հատկապես մեր հասարակության զարգացման ներկա փուլում:

**«Իրավունք» հասկացությունը կատարում է նաև գիտական կանխագուշակման գործառույթ՝** պարունակելով կամ առաջադրելով տեսականորեն հիմնավորված վարկած: Այսպես, մարքսիզմը, իրավունքը կապելով դասակարգային հասարակության հետ և այն համարելով դասա-

կարգային երևույթ, կանխատեսում էր դրա «մահը» կոմունիստական ոչ դասակարգային հասարակարգում: Իրավունքի ազատական-իրավաբանական տեսությունը, հիմնավորելով իրավունքի հասկացությունը և էությունը իրավահավասարության սկզբունքի միջոցով և կիրառելով պատմական զարգացման դիալեկտիկական մոտեցումը, հիմնավորում է հումանիտար-իրավական տիպի պետության և իրավունքի, ինչպես նաև ցիվիլիստական հասարակության սեփականության և իրավունքի գալուստը<sup>18</sup>:

Իրավունքի և պետության տիպաբանության այս կամ այն տարբերակի հիմքում ընկած է իրավունքի և պետության որոշակի հասկացություն: Ինչպիսին իրավունքի և պետության հասկացությունն է, այնպիսին էլ դրանց պատմական զարգացման տիպաբանությունն է: Ըստ պետության և իրավունքի առաջացման ազատական-իրավաբանական տեսության, իրավունքը և պետությունը ծագում, գործում, զարգանում են և մինչև օրս սոցիալական կյանքում գոյություն ունեն որպես հասարակական հարաբերություններում մարդկանց ազատության իր էությամբ միասնական եղանակ, կարգի և կեցության ձև, ազատության ճանաչման և իրականացման երկու փոխկապված բաղկացուցիչ տարրեր: Իրավունքի և պետության տիպաբանության ազատական-իրավաբանական հայեցակարգը գտնում է, որ իրավունքի և պետության տիպերը մարդկանց ազատության ճանաչման և կազմակերպման պատմական հիմնական ձևերն են, որոնք արտահայտում են ազատության առաջադիմական փուլերը: Հետևաբար, իրավունքի և պետության տիպաբանության հիմնական չափանիշը մարդուն որպես իրավունքի սուբյեկտ, ինչպես նաև պետության սուբյեկտ ճանաչելու պատմական ձևն է: Ըստ այս հայեցակարգի՝ իրավունքի և պետության պատմական ձևերն են՝ էթնոսային տիպը, դասային տիպը, անհատական տիպը<sup>19</sup>: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս կանխագուշակելու ապագայում պետության և իրավունքի նոր տիպը՝ հումանիտար-իրավական:

Այսպիսով, իրավունքի փիլիսոփայության և տեսության մեթոդաբանական հիմնարար «իրավունք» հասկացությունն ունի և՛ գիտատեսական, և՛ գործնական-կիրառական նշանակություն, որն արտահայտվում է դրա գործառույթներում: «Իրավունք» հասկացությունը՝ որպես իրավագիտության առաջնային և հիմնարար հասկացություն, որպես ամեն մի իրավա-

<sup>18</sup> Տե՛ս **Վ. Ս. Ներսեսյանց**, Ցիվիլիզմի մանիֆեստը, Եր., 2000:

<sup>19</sup> Հին աշխարհի պետություններում անհատները համարվում էին ազատ և պետության սուբյեկտներն էին դեմերի (տոհմերի) անդամները: Հռոմում՝ հռոմեական քաղաքային համայնքը (civitas) և նրա անդամները (քվիրիտները): **էթնիկական տիպի** իրավունքի և պետության պայմաններում ազատներն իրավունքի և պետության սուբյեկտներն են, իսկ անազատները՝ օբյեկտները: Ստրկատիրության հաղթահարումը հանգեցնում է միջին դարերի **դասային տիպի** իրավունքի և պետության ձևավորմանը: Ազատության էթնիկական չափանիշն իր տեղը զիջում է դասային ազատությանը: Այս տիպում ստրուկներ չկան, և այդ իմաստով բոլորն ազատ են, սակայն այդ ազատության չափը հասարակության տարբեր դասերի մոտ տարբեր է: Ազատությունը այստեղ կրում է դասային սահմանափակումներ: Հասարակության անդամների ներդասային իրավասուբյեկտության հավասարությունը զուգակցվում է միջդասային անհավասարությամբ: Դասային տիպին գալիս է փոխարինելու **անհատական տիպը**, որը կարելի է անվանել նաև հասարակության զարգացման անհատական-քաղաքացիական տիպ: Այս դեպքում արդեն մարդն իրավունքի և պետության սուբյեկտ է ոչ թե որպես որոշակի էթնոսի կամ դասի անդամ այլ որպես քաղաքացիական ինքնուրույն անհատ:

կան հայեցակարգի հիմք, կատարում է տեսանեթոդական, կիրառական, քաղաքական, արժեքաբանական, կրթադաստիարակչական, գաղափարական կողմնորոշիչ, կանխագուշակող գործառույթներ: Նշված գործառույթներն «իրավունք» հասկացությունը կատարում է և՛ բուն պետության, և՛ իրավունքի տեսության, և՛ ողջ իրավագիտության համակարգում և թե՛ քաղաքացիական հասարակության առանձին կառուցվածքային բաղադրատարրերի ենթահամակարգերում:

**Բանալի բառեր** – *իրավահասկացություն, իրավունքի էություն, իրավունքի նպատակ, իրավական օրենք, իրավահասկացության գործառույթներ, իրավական արժեքաբանություն, իրավահասկացության տիպ*

**АРТУР ВАГАРШЯН** – *Теоретико-методологическое и практическое значение понятия "право".* – Понятие "право", которое являет собой методологическую проблему философии и теории права, имеет прикладное и научно-теоретическое значение, что проявляется в его функциях. Право как первичное и фундаментальное понятие правоведения и основа каждой правовой доктрины выполняет целый ряд функций: теоретико-методологическую, прикладную, политическую, воспитательную, ориентировочную, прогностическую, нормативную. Эти функции данное понятие выполняет как в системах государства и теории права, так и правоведения в целом, а также в подсистемах отдельных структурных элементов гражданского общества.

**Ключевые слова:** *правопонимание, сущность права, цель права, правовой закон, функции правопонятия, правовая аксиология, тип правопонимания*

**ARTHUR VAGHARSHYAN** – *Theoretical-methodological and Practical Value of the Concept of «Law».* – The issues on the meaning of the concept of «Law» are discussed in the article presneted. The author states that the notion of law, as the main methodological problem of the theory and philosophy of law, has both scientific and practical-application value, which is reflected in its functions. Concept of «Law» as the primary and fundamental concept of the legal science, as a basis for legal doctrine, performs the following functions: theoretical-methodological, implementation, political, estimative, educational-pedagogical, orientation, prognostic. The mentioned functions are performed by the concept of «Law» in the systems of both state and legal theory, as well as of the entire legal system and the sybystem of certain structural components of the civil society.

**Key words:** *legal concept, legal nature, the goal of the law, legal law, functions of legal concept, legal estimation, type of legal concepts*